

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ

ԵՐԾԵՍԻՆԵՐԻ ՆԵՆԳՈՒԹԻՒՆԸ

Կեղծելու ընդունակութեան եւ տրամադրութեան մէջ (մեծ, անդ են բռնում ծաւլութիւնը, շատակերութիւնը, որ եւ է բանի աչք անկելը, քմահաճոյքը, որ եւ է ծանր աշխատութիւնից աջատւելու ցանկութիւնը, երես առնելու փափաքը, անտփառութիւնը, ընդօրինակութիւնը, սրանք, մասադ հասակում, նոյնիսկ ախտային պատճառներից թուրովին անկախ, խաբէբայութեան եւ կեղծիքի սկզբնապատճառներն են, որոնց եմթարկւում եւ բռնադատում են կամ որոնց մէջ հաճոյք են զգում վատ հաւասարակշռած մտքերը :

Երեխայական նենգամտութեան հանգամանքներն ի՞նչ են . կեղծիքը ի՞նչ որոշ ձեւեր է ստանում, ի՞նչ բան են կեղծում : Այժմ այս հարցերով պէտք է դրողենք :

Փօրձառութեան պակասութիւնից է . որ երեխան մասնաւորապէս հակուում է ընդօրինակելու, նմանագործելու :

Ընդհանրապէս նենգամիտ երեխաները հիւանդութիւններ են կեղծում եւ այս կեղծած առողջական խանգարումները կարելի է չորս խումբերի բաժանել .

1 — Առաջին խումբի մէջ են մտնում զուտ զգայական եւ զոդ երեւոյթները : Գլխաւորաբար կեղծւած բանը ցաւն է : Մի քանի օրինակներ յիշենք :

Վեց տարեկան մի աղջիկ նախանձի զգացումից եւ աւշադրութիւն գրաւելու դիտումից գրգռւած, շարունակ գանգատւում էր մշտակամ գլխացաւից եւ լուսավախութիւնից (ֆոթոֆօբի) : Մնունդները մերժում եւ յամառում էր մթութեան մէջ մնալ : 14 տարեկան եղած ժամանակ էրստէրիայի ենթակայ եղած է :

Տասն եւ չորս տարեկան մի պատանի շատ յոգնեցուցիչ գտած ուսումը կտրճ կտպելու համար սատակի գլխացաւ, ստամոքսա-աղիքային խանգարումներ եւ ստորին անդամների մրջնոտութիւն էր կեղծում, որոնք միայն իր երեւակայութեան մէջ գոյութիւն ունէին :

Մին 14 եւ միւսը 13 տարեկան երկու քոյրեր տասնեւհինգ օրի չափ մին գլխացաւից եւ միւսը կուղացաւից էր գանգատւում : Հարցաքննութիւնների տակ ճնշւած, իրենց կեղծիքը խոստովանեցին :

2 — Երկրորդ խումբի (բուրբից ամենակարեւորը) մէջ են գրտնըւում շարժողական խանգարումներ — ջղացնցում —

ներ, պարախտ, անդամալուծութիւններ, լուսնոտութիւն, ջղային հազ, կապոյտ հազ, կլիթիկ (hoquet) եւայլն, որոնք նենգամտութեան եւ քնքորինակելու բնազդումին զոհացում են տալիս :

Ծնողներէց շատ երես առած 4 տարեկան մի աղջիկ գետնի վրայ էր ընկնում եւ մի քանի բոպէ անշարժ մնում էր, յետոյ, երբոր նրան շրջապատում էին, սկսում էր ծիծաղել :

Մի փոքր աղջիկ ամիսներով կառքով հանքային ջրերում ման էր գալիս, որի մէջ ձգուած էր նրա անկողինը, օրովհետեւ ոտքերը չէր կարողանում գործածել, կէս մէջքից ցած անդամալուծւած էր : Մի ճարպիկ մտածմունքով նրան պահեցողութեան (գիշտ) ենթարկեցին, յետոյ, իր անկողնից բաւական հեռու, բայց տեսանելի մի կէտում կեւրակուրներ եւ մի աման կաթ մոռացուած ձեւացրին : Քաղցածութիւնից դրդւած, գիշերը շատ լաւ կարողացաւ ոտի կանգնել եւ բալորը ուտել :

3 — Երբորդ խումբը բաղկանում է մտաւորական խանդարումն երից : Այս կեղծումը—խելագարութիւնը—երեխաների մէջ շատ հազուադէպ է, թէեւ չափաւանների մէջ բաւական յաճախադէպ :

4—Չորրորդ խումբին պատկանում են բոլոր գործարանական պաշտօններ խանդարումն եր, լինին զգայաբանքները, լինին միւս գործարանական (օրդանական) գրութիւնները, ինչպէս, տեսողութեան զանազան խանգարումներ, խուլութիւն, անձայնութիւն, համբուսթիւն, անդադրելի փխտումներ, եւայլն :

Այժմ մի քանի խօսք կատարեն նենգութիւնը ճանաչելու միջոցների եւ ուղղելու սկզբունքների մասին :

Նենգամտութեան տրամագրութիւնները գործադրելու համար երեխայի ընտրած մասնաւոր կերպը ի՛նչ որ էլ լինի, հիմը բնաւ չէ փոխւում, նոյնն է մնում : Հետեւեալ երկու պատահականութիւններից մէկի առաջն ենք դնում : Կամ, երեխան հոգեկան-ուղեղային բնական (նորմալ) մի կազմածք ունի, մի երեխայ, որ միայն անցողակի, պատահական մի թելադրանքի առաջ է խոնարհւում : Իր ցանկութիւնը զոհացնելուց յետոյ, շարունակելու եւ յարատեւելու մի որոշ մտադրութիւն չէ մնում, եւ մինչեւ իսկ այն ժամանակ իր անշնորհքութիւնը իր ամօթն է դառնում, նրան վնասեցնում է, եւ իր ուղղամտութեան քղապետները ինքնին գերազանց հանդիսանալով, անկեղծութեան ճանապարհի մէջ է մտնում, ուղղում է : Եւ կամ երեխան նեարդային (ջղային) մի կազմածք է ներկայացնում. այդ պարագային մի հարց առաջ է գալիս : Հիստէրիա ունի՞, այսինքն հիւանդ է : Հիստէրիան աւելի կամ քիչ առաջացել է, այսինքն տակաւին առողջ, բայց չափազանց նեարդային եւ վատ հաւասարակշռութեամբ է :

Հիստէրիքոսները առանց որոշ նպատակի, միմիայն ուրիշների ու-

չադրութիւնը դրաւելու եւ իրենց շրջապատողներին խաբելու համար են կեղծում :

Պարզ նեարդայինները միշտ մի թագուն նպատակ ունին , թեւ վարժ են այս հնարքներին :

Հիստէրիքոտ-լուսնոտները պարզապէս հիւանդներ են եւ նրանց իրրեւ հիւանդ պէտք է դարձանել :

Գալով յատուկ նեարդայիններին, սրանց արտա-բնախօսական վիճակը կարելի է բացատրել ժառանգականութեամբ, եթէ կարելի լինի մի քննութիւն կատարել , նրանց ընտանիքների մէջ մեծ մղսամբ լուսնոտութեան , հիստէրիայի, կաթածի տրամագիր կաշմուածքների, սիֆիլիսի, ալկոլականութեան արատներ երեւան կզան :

Մանկավարժական հնարքները նեարդայիններին մասաւորական ուղղութեան վրայ անուրանալի մի ազդեցութիւն ունին :

Նրանց երեւակայութիւնը ծայրայեղօրէն դիւրազգայ է : Այդ չափազանց դիւրազգայութիւնը հարկաւոր է նախանձախնդիր հոգածութեամբ եւ խոհեմաբար գործածել : Յուզիչ, տոսմական, տարափ ազդող պատմածքներ բնաւ պատմելու չէ : Մանաւանդ ուսուցման մէջ դեր-բնական բաներ բնաւ մոցնելու չէ : «Ուղեղային գործողութեան խանգարմանց բոլոր պատճառների մէջ, առում է պրօֆ. Շարկօ , հրաշալիքի հաւատարու չափ ամենաազդու եւ ամենանշանակելի մի պատճառ չկայ» :

Քաղցր եւ միեւնոյն ժամանակ զօրեղ ուղղութեամբ, դատողութեամբ եւ համոզելով , զեղուն ինքնակամութեան օգտակար դարձածութեամբ , աշխուժութեամբ , բարձր եւ վեհ գաղափարների մէթոսաւոր թելադրութեամբ է, որ կարող կը լինենք այս ըմբոս միտքերը նաեւելու, նսական կիրքերը հակակշռելու, կիրքեր , օրոնք նրանց իմացականութեան մութ խաւերում են բողբոջում :

Ինչ միջոցով էլ որ լինի—քաղցրութեամբ կամ պատիժով—մանաւանդ քաղցրութեամբ եւ այն էլ շատ սրտանց եթէ կարելի է յանցաւորին վստահութիւն ներշնչելով պէտք է ձեռք բերել նրա խոստովանութիւնը , Այն ժամանակ նրա գլխում պէտք է մոցնել այն ճշմարտութիւնը, թէ մարդ մի հիւանդութիւն կեղծելով իսկապէս ենթակայ է լինում այդ հիւանդութիւնը ստանալու, որը կարող է անբուժելի դառնալ :

Երբոր, բոլոր այս ջանքերը եւ միջոցները ի դերեւ ելնելու լինեն, ամենահարկաւոր եւ ամենաապահով միջոցը երկխային առանձնացնելն (isolement) է : Բայց միշտ պէտք է նկատի ունենալ, որ պարագան թէ, երբոր վատթարացումը այն աստիճան բաւական զօրաւոր է, որ ուղղելու ամենախելացի եւ ամենալարատեւ հնարքներ, անօգուտ են դառնում, այն ժամանակ հիպնոսիզմի նման զօրաւոր միջոցների դիմել է հարկաւոր եւ ինչպէս Դելազիով ասում է՝ «բարոյա-

կան մարդը կազմելու համար, առանց ժառանգելու չը պէտք է վարել։

Յաճախ կրթութիւնը դաստիարակութեան հետ կամովին շփոթուած են . մանաւանդ մեր դպրոցներում . ամենեւին ուշադրութիւն չեն դարձնում դաստիարակութեան վրայ, միայն տղուն միտքը մշակել են աշխատութեամբ, հոգին ու բարոյականը մոռացութեան առջև : որոնք միայն լաւ ուղղութեամբ դաստիարակութեան շնորհիւ կարող են զարգանալ եւ բարեշրջել : Դաստիարակութեան բարիքները յաճախ կասկածանքով, նահապետող, կամ ուրիշ խօսքով, նրա օգտակարութիւնը նուազեցնողը նախապաշարուածն է : Մեր բարոյական ընդունակութիւնները բնածին եւ բազմազգիմ են , չափ քիչ բացառութեամբ , նրանք միայն կանոնաւոր մշակութեամբ, վառ եւ կենդանի պահող դրդումներով կարող են մի լուրջ ոյժ ներկայացնել :

Աւելացնենք, որ պայտելի բարոյական զգացումների բուն արտայայտութիւնները ցեղի, կլիմայի, բարքերի եւ ժամանակի համեմատ յաճախ ամենահակառակ երեւոյթներ են ստանում :

Բարոյական ընդունակութեանց գործնական կիրարկումների մէջ բնութեան եւ դաստիարակութեան մասնակցութեան աստիճանները որոշել զգուշար չէ : Մին միւսի հետ համաձայն է . այս երկու փոխադարձ ներգործութիւնները միմեանց սերտ կապւած են :

Եթէ միշտ յարմար եւ հնարաւոր չէ բնութեան վրայ դաստիարակութեան գերազանցութիւնը ապահովել, բնութեան սխալները դաստիարակութեամբ սրբազրել , այն ժամանակ , աւելի բանական չէ՞ մեր օրէնքները կրկնապատկել, բնութեան յոռի դրդումները թելադրութիւնների (հիպնոտիզմական) միջոցով ուղղելու համար :

Այս՝ զէպքում հիպնոտիզմը բարոյական առաջնող մի ազգակ է . ինչպէս բժշկութեան մէջ եղած է բուժական մի միջոց : Մանկավարժութեան մէջ այժմ մեծ տեղ է բռնում նա եւ ապագայում դրպրոցական ծրագրերում էլ մեծ տեղ է բռնելու :

Դոկտոր Կ. Յ. ՓՅՆԱՅԵԱՆ

